ՍՈՒՐԵՆ ԱՍԱՏՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ծնվել է 1907թ., Ստեփանավանի շրջանի Գյուլագարակ գյուղում:

1924թ. ավարտել է Թբիլիսիի թիվ 14 տեխնիկումը և աշխատանքի անցել գյուղկոոպի Թբիլիսիի բաժանմունքում:

1926թ. մեկնել է Մոսկվա և սովորել էներգետիկայի ինստիտուտի էլեկտրատեխնիկական ֆակուլտետում:

1930-1948թթ. աշխատել է ՀՍՍՀ տարբեր հիդրոէլեկտրակայաններում՝ որպես տնօրեն, կառավարիչ: 1946թ. եղել է Գյումուշհէկշինի պետի տեղակալ, 1947-1948թթ.՝ Լենինականի քաղխորհրդի գործկոմի նախագահի տեղակալ, Լենինականի քաղխորհրդի գործկոմի նախագահ (1948-1952):

1952-1957թթ. աշխատել է <<Հայհիդրոէներգոնախագիծ>> ինստիտուտում և միաժամանակ ղեկավարել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի արտադրության պլանավորման կազմակերպման ամբիոնը: Ս. Վարդանյանը տեխնիկական գիտությունների թեկնածու էր, դոցենտ և մեծ ներդրում ունի էներգետիկայի բնագավառի մասնագետներ պատրաստելու գործում:

1957թ. ընտրվել է Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահի առաջին տեղակալ, 1960թ. մարտին՝ Երևանի քաղխորհրդի գործկոմի նախագահ:

1962թ. նշանակվել է ՀԽՍՀ Նախարարների խորհրդին առընթեր էներգետիկայի և էլեկտրաֆիկացիայի գլխավոր վարչության պետ՝ ՀԽՍՀ նախարար, 1971-1977թթ.՝ ՀԽՍՀ էներգետիկայի և էլեկտրաֆիկացիայի գլխավոր արտադրական վարչության պետ:

Ս. Վարդանյանը եղել է ՀԽՍՀ ԳԽ պատգամավոր, ԳԽ նախագահության անդամ: Պարգևատրվել է Լենինի շքանշանով:

Մահացել է 1979 թվականին: